

Արցախյան ակնթարթներ

«Հայ զինվոր» թերթի ցուցասրահում բացվել է արցախցի լուսանկարիչ Ռուսլան Սարգսյանի գործերի՝ «Պատերազմը Արցախում» վերտառությամբ ցուցահանդեսը:

Ռուսլան Սարգսյանը ծնվել է Ստեփանակերտում: Լուսանկարչությամբ սկսել է զբաղվել դպրոցական տարիքից: 9–րդ դասարանում նրա «Քաղաք հայրենի» և «Իմ դասարանը» լուսանկարները տպագրվել են «Սովետական Ղարաբաղ» թերթում, որտեղ էլ սկսել է աշխատել բանակից զորացրվելուց հետո: Աշխատանքին զուգահեռ սովորել է Մոսկվայի ժողովրդական արվեստների համալսարանի լուսանկարչական ֆակուլտետի հեռակա բաժնում: Շնորհալի լուսանկարչի աշխատանքները տպագրվել են նաև միութենական թերթերում և ԽՍՀՄ մի շարք հանրապետությունների պարբերականներում:

1993 թվականի գարնանը Ռուսլան Սարգսյանը Մարտակերտի ճակատում ծանր վիրավորվեց և միայն բժիշկների մեծ ջանքերով կարողացավ ապաքինվել: Այսօր էլ ԼՂՀ մամուլի և լրատվության դեպարտամենտում զբաղվում է իր սիրած գործով՝ շարունակելով արցախյան գոյապայքարի տարեգրությունը իր լուսանկարներով: